

ԱԶԳԱՅԻՆԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆԻ (ԻՆՏՐԱ) ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տիրան Չրաքյանը (Ինտրա) հայ գրականության ամենաինքնատիպ, միևնույն ժամանակ ամենաառեղծվածային դեմքերից մեկն է, ում կյանքն ու ստեղծագործությունը արժանացել են հակասական, նույնիսկ ծայրահեղ գնահատականների: Հատկապես նրա «Ներաշխարհ» խոհախմաստասիրական երկն ու քերթվածների «Նոճաստան» ժողովածուն բարձր են գնահատել այնպիսի գրական մեծություններ, ինչպիսիք են Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը և այլք, բայց քիչ չեն եղել նաև Ինտրային քարկոծողներն ու մերժողները: Նույնիսկ լրջմիտ քննադատողներից ոմանք գրողին հաճախ մեղադրել են ազգային խնդիրներին անհաղորդ լինելու, վերացական ու կեղծ արժեքներ դավանելու մեջ: Մինչդեռ ամբողջական ծանոթությունը Ինտրայի բազմաբնույթ գրական գործերին ոչ միայն հերքում է այդ տեսակետը, այլև հնարավորություն է տալիս վեր հանելու գրողի ստեղծագործական մտածողության ազգային հենքը:

Տասնամյակների ընթացքում մեզանում ձևավորված մի կարծրատիպով Ինտրան ու նրա ստեղծագործությունը համարվել են ոչ միայն հայ իրականությանն ու ընկերային կյանքին օտար, այլև «ազգէն, ազգայինէն» վերկամ դուրս, «իր ժողովուրդին տագնապին» անհաղորդ: Ուստիև արևմտահայ գրականության համապատկերների մեծանուն հեղինակը խոսք է բացել անգամ Ինտրային իր ժողովրդի հետ հաշտեցնելու անհրաժեշտության մասին¹: Բայց այդպէս է արդյոք:

Հարցի պատասխանը տալուց առաջ պետք է վեր հանել այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել նման «ճակատագրական» եզրահանգումների համար: Այս իմաստով դիտարկելի է, որ Ինտրան իր «Ներաշխարհ»-ով հանդես եկավ 20-րդ դարասկզբի այն բարդ շրջանում, երբ սուլթան Համիդի կազմակերպած 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո տիրող անկումայնության մթնոլորտում առավել տիրապետող էր իրականության ռեալիստական պատկերման, ազգային ու հասարակական կյանքի երևույթների անմիջական արձագանքման պահանջը: Պատահա-

¹Հոդվածն ընդունվել է տպագրության 30.07.2013:

1 Տե՛ս Հ.Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 8, Անթիլիաս, 1980, էջ 18 և 204:

կան չէ, որ Հ.Օշականը Ինտրային համարում էր «Ժամանակավրէյա ռոմանօթիք»՝ նրան մեղադրելով իրապաշտ գրողների փոխարեն ռոմանտիկ բանաստեղծներին արժևորելու մեջ²:

Իսկ արևելահայ իրականության մեջ, հատկապես խորհրդային տասնամյակներին Ինտրայի ստեղծագործությանը տրվող գնահատականները ելնում էին հիմնականում սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հիմնադրույթներից, և հասկանալի է, որ դրանցում տեղ չէր կարող լինել «միստիկ», «մահվան երգիչ» Ինտրայի համար: Միայն անցյալ դարի վերջերին Սփյուռքում և Հայրենիքում վերը նշված կարծրատիպը կոտրելու և հիմնարար հետազոտություններով Ինտրային իր արժանի տեղը հատկացնելու փորձեր եղան (նկատի ունենք Վլադիմիր Կիրակոսյանին, Ստեփան Թովսյանին, Ալբերտ Կոստանյանին, Գրիգոր Պըլտյանին և այլոց): Այնուամենայնիվ, դրանք մնացին իբրև առանձին, մասնակի քայլեր, քանի որ մինչ օրս հրապարակված հոդվածներում և հետազոտություններում Ինտրայի ստեղծագործությունը չի քննվել իր ամբողջության մեջ: Հին ու նոր ուսումնասիրողների ուշադրությունը սևեռված է եղել գլխավորապես գրողի առանցքային երկերի՝ «Ներաշխարհ»-ի ու «Նոճաստան»-ի վրա, մինչդեռ թե՛ դրանցից առաջ և թե՛ հետո Ինտրան գրել է բավական թվով ուշագրավ գործեր (բանաստեղծություններ, հուշեր, ուղեգրություններ, քնարահոգեբանական ու արվեստագիտական պատումներ, տեսական հետազոտություններ), որոնց քնությունը միանգամայն նոր լույսի տակ է ներկայացնում ինքնատիպ գրողի ու մտածողի ստեղծագործությունը:

Ասվածը վերաբերում է առաջին հերթին Ինտրայի ստեղծագործության մեջ **ազգային ու համամարդկային արժեքների հարաբերակցության բացահայտմանը:**

Ինտրայի ստեղծագործության **գրական ակունքների** ուսումնասիրությունը վեր է հանում նրա սերտ առնչությունները ինչպես համաշխարհային, գլխավորապես եվրոպական պոեզիայի ու արձակի ուղենշային երևույթների, այնպես էլ ազգային գրական-մշակութային ավանդույթների հետ: Ազգայինի պարագայում առնչությունները տանում են մինչև Գողթան երգեր, իսկ ավելի ուշ շրջանում՝ Նարեկացու, Ֆրիկի, Քուչակի ստեղծագործական ավանդույթները: Ինչ վերաբերում է 19-րդ դարին, ապա այստեղ, գրական հարակից գծերի կողքին, հստակ նկատելի է, մասնավորապես, **Ալիշան-Թ. Թերգյան-Պ. Դուրյան-Ե. Տեմիրձիպաշյան-Ինտրա** զարգացման կորագիծը, որը որոշակի կամուրջ է նախորդ սերնդի ստեղծագործության և 20-րդ դարակազմի արևմտահայ բանաստեղծության զարթոնքի միջև: Մի ավանդ, որը, ցավոք, մինչ օրս ըստ արժանվույն չի գնահատվել մեր գրականագիտության կողմից:

Քնությունը սկսենք Ինտրայի նշանավոր «Ներաշխարհ»-ից. ապագային է արդյոք այդ երկը, ինչպես պնդում են որոշ ուսումնասիրողներ: Դեռևս 1890-ական թվականների ջարդերից հետո, Միքայել Կյուրձյանին գրած նամակներից մեկում Ինտրան խոստովանում էր, որ ստեղծագործական իր խառնվածքով հեռու է հասարակական ու քաղաքական կյանքի

² Տե՛ս նույն տեղում, էջ 32 և 158:

ՊՐԱԿԱՆԱԿԻ ՏՈՒԹՅՈՒՆ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽԱ-ՄԱԿՐԱՆԵՐ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

իրողություններն ուղղակիորեն պատկերելու նպատակադրումից³: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե նա չէր վերապրում ազգային կյանքի իրադարձությունները և անտարբեր էր ազգին պատուհասած աղետների ու ողբերգությունների հանդեպ: Պարզապես այդ շրջանում Ինտրային ավելի հետաքրքրում էին մարդու ներաշխարհի անդնդախոր գեղեցկությունների ու գաղտնիքների բացահայտման, մարդու՝ որպես տիեզերական բանական էակի, բուն արժեքի վերհանման խնդիրներն ու նպատակները, որոնք իրենց մեկ այլ կողմով, անշուշտ, հակադրվում էին իրականության մեջ մոլեգնող մարդ-գազանի կերպարին: Որդեգրելով չարին գեղեցիկի իդեալով դիմագրավելու հայտնի դիրքորոշումը՝ Ինտրան, կարելի է ասել, անուղղակիորեն մասնակցում էր չարի մարդատյաց նկարագրին հայի բարձր որակների ու բարոյական կերպարի հակադրմանը: Որ գրողի դիրքորոշումը իրական կյանքի հանդեպ միանգամայն ներգործուն-լավատեսական էր, ակնհայտ է դառնում նաև ավելի ուշ՝ 1906-ին գրված «Ներաշխարհն իր հեղինակէն դիտուած»⁴ հոդվածի այն տողերից, ուր Ինտրան, խոսելով իր գլխավոր երկի ստեղծման ժամանակի մասին, ընդգծում է կեղեքված իրականությանը նոր ու կենդանի շունչ ներարկելու անհրաժեշտությունը. «Ո՛հ, ստուգիվ, երկար ատեն կա, որ մեր գրականության մեջ լաված չէր խանդավառության, հուզման ձայնը» (էջ 337),- գրում է նա:

Այս իմաստով, Տ. Չրաքյանի հայրենասիրությունը Նիկողոս Սարաֆյանի բնորոշած «խորունկէն գացող հայրենասիրութիւն» է, «այն, որ կ'ուզէ իր ազգը տեսնել մտաւոր աւելի բարձր մակարդակի մը վրայ»⁵: Ինտրան մեկն է «բարձր գրականութեան և տիեզերական մարդուն ներկայացուցիչների»⁶ այն փաղանգից (Ն.Սարաֆյանը հիշատակում է նաև Բողլերի, Մալարմեի, Ռեմբոյի, Վալերիի անունները), ովքեր իրենց արվեստում հեռու արտաքին հատկանիշներից, միտված են համամարդկային խորքերի բացահայտմանը, բայց ովքեր «ազգային հուներէն անդին, կը փառաւորէն իրենց ազգը»⁷:

Դժվար է, իհարկե, համաձայնել նաև այն մտքի հետ, թե «Ներաշխարհ»-ում չկան հայի բնորոշ կերպարներ: Մասնավաճառորդորեն ավանդաբար հարցը դիտարկում են դասական արձակի պոետոլոգի-գաղափարական հենքի բացակայության համատեքստում: Ու չնայած դրվագային, բայց բավական տիպական կերպարների (եկեղեցում հանդիպած ծերունու, գինետան «իմաստունի» և այլն) առկայությանը, այդ ստեղծագործության մեջ անտեսվում է ամենից կարևորը, հենց իր՝ գրողի կերպարը, որը խտացնում է բարու և արժանապատվության, գեղեցիկի ու ճշմարտի, արդարության ու լավատեսության ազգային հատկանիշները:

Այնուամենայնիվ, Ինտրայի ստեղծագործության մեջ քիչ չեն գործերը, որոնցում ազգային արժեքների նրա ըմբռնումներն ու համոզմունքները

3 Տե՛ս ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, II բաժին, 241, 25 սեպտ. 1900 թ.:

4 Տպագրվել է՝ «Բիզանդիոն», 1906, N 3100, 3104, 3113, 3121, 3128, 3129, 3131: Հետագայում հրատարակվել է նաև Տ. Չրաքյան, Երկեր, Եր., «Մով. գրող», 1981 թ. Ժողովածուում, էջ 314-354: Ստորև հոդվածից մեջբերումներն արվում են այդ ժողովածուից՝ նշելով համապատասխան էջը:

5 Ն. Սարաֆյան, Տեսարանները, մարդիկ և ես, Եր., Մատենաշար «Երկ», 1994, էջ 109:

6 Նույն տեղում, էջ 108:

7 Նույն տեղում, էջ 109:

դրսևորվել են առավել անմիջական կերպով: Չպետք է պատահական համարել այն, որ դրանք վերաբերում են գլխավորապես 1908 թվականից հետո ընկած տարիներին: Այս հանգամանքի շեշտադրումը կարևոր է երկու տեսակետից. նախ՝ որովհետև Տիրան Չրաքյանի կյանքի ու գործի վերաբերյալ հրապարակի վրա եղած հետազոտություններից կարող է այն տպավորությունը ստացվել, թե «Նոճաստան»-ից հետո Ինտրան պարզապես դադարել է ստեղծագործել, որևէ լուրջ բան չի ստեղծել: Մինչդեռ 1908-1914 թվականներին՝ մինչև գրելուց լիովին հրաժարվելը, նա ոչ միայն ակտիվորեն մասնակցել է գրական-մտավորական կյանքին, այլև ստեղծել մնայուն արժեք ներկայացնող մի շարք գործեր: Հայտնի է, թե ինչ էր խորհրդանշում 1908 թվականը, մասնավորապես՝ այդ տարվա հուլիսի 11-ին (24-ին) Օսմանյան սահմանադրության վերականգնումը, ինչը բռնապետությունից ազատագրման և իրավական հարաբերությունների հաստատման հույս ու խանդավառություն էր ծնել ազգային փոքրամասնությունների, հատկապես հայության շրջանում: Օտար երկրներում գտնվող տասնյակ հազարավոր պանդուխտներ, տարագիրներ, թուրքական ճնշումներից փախած մտավորականների մի մասը, անկեղծ հավատ ընծայելով բարեփոխումների հնարավորությանը, դրանից հետո վերադարձել էին իրենց ծննդավայրերը:

Շատ շուտով, սակայն, այս խանդավառությունը տեղի տվեց ծայրահեղ զգուշավորության ու տագնապի, երբ սահմանադրության ճակատագիրը մազից էր կախված, և միայն զորքի միջամտությունը կանխեց Թուրքիայի պատմաքաղաքական կյանքի վերադարձը դեպի նախկին բռնապետություն: Ուստի Կիլիկիայի հայության ջարդերը՝ 1909 թ. ապրիլին, վերջնականապես ցրեցին բոլոր պատրանքները: Թուրքական իշխանությունների ու եվրոպական պետությունների աչքի առջև կոտորվում էր մի ժողովուրդ, որի «հանցանքը» սահմանադրության հոչակած «Ազատության, Հավասարության և Եղբայրության» սկզբունքներին հավատ ընծայելն էր:

Դժվար չէ պատկերացնել, թե ազգային կյանքի այդ ողբերգական իրավիճակը ինչպիսի ծանր ազդեցություն պիտի ունենար Ինտրայի պես նրբազգաց ու լուսասեր հոգու վրա: Նա, ով մշտապես տառապում էր նույնիսկ առօրյա կյանքի անկանոնություններից ու կաշկանդումներից, ստիպված էր ականատեսը լինելու իր ժողովրդի նկատմամբ իրագործվող ջարդերին ու հալածանքներին: Եվ, բնականաբար, Ինտրան չէր կարող չարձագանքել այդ աղաղակող անարդարություններին: Միայն թե, ինչպես միշտ, նրա արձագանքը ուրույն էր՝ իր հոգեկան կերտվածքին ու ներաշխարհին համապատասխան: 1909 թ. սեպտեմբերի վերջերին, ի նպաստ Ջեյթունի սովյալների Պոլսում կազմակերպված մի երեկույթում, գրական-երաժշտական այլ գործերի հետ, կատարվում են նաև Ինտրայի «Միհուն»-ի ու «Աղօթք»-ի խոսքերով գրված երգերը: Մանավանդ վերջինը՝ «Աղօթք»-ը, որ նվիրված էր հենց Ջեյթունի սովյալներին և ուներ «Ջեյթունի սովելոց համար» ենթավերնագիրը, կատարյալ ձոն էր բիրտ ուժի ու բռնության հանդեպ ոգեկան կորովի, բարու և հերոսացման ու նաև ակնկալիք՝ Աստվածային գութի: Ընդամենը ութ տողից բաղկացած այդ գողտրիկ և խորունկ գործը արժե, որ մեջբերենք ամբողջությամբ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽ-ՆԵՊԵՐՏԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

**Տէ՛ր, քաջերուն, զոռերուն վերին ապաւէն,
Ամենափառ Տօրոսի սարերուն ի ծոց.
Ազատութիւնն և ըզՔե՛զ պաշտող Ջէյթունցոց
Շնորհէ՛ ցորեանն անարատ, գութիդ արևէն:**

**Տորեանը, սնունդն աղքատին, բարուոյն, հերոսին,
Անոնց՝ որ, Տէր, կը պահեն պատուէրներդ հրեղէն,
Մի՛ թողուր որ նրաձուին Սովին ճիւղէն,
Բագուկներն որ բռնութիւնն յաղթահարեցին՝:**

Ուրեմն պատահական չէ, որ Տիրան Չրաքյանի այս շրջանի մի շարք հրապարակումներն աչքի են ընկնում հենց ազգային-հայրենասիրական թեմաների ու գաղափարների շեշտադրմամբ: Այս իմաստով 1908-ից հետո գրված գործերի մեջ, «Աղօթք»-ից բացի, առանձնապես են նաև «Տօրոսէն անցք» ուղեգրությունն ու «Ռ.Ը.Պէրպէրեան. գրագետ» խորունկ վերլուծականը:

«Տօրոսէն անցք»-ը⁹, իր գաղափարական ու գեղարվեստական արժեքով պատկանում է տարբեր տարիներին Ինտրայի հեղինակած հուշ-ուղեգրությունների հայտնի շարքը: Հայոց պատմական օրրաններից մեկը՝ Կիլիկիան, նրա պատմությունն ու բնությունը, հատկապես՝ վեհաքանչ Տավրոսյան լեռները տեսնելը, այդ տեղերով անցնելն ու ամեն բան անմիջական ընկալումներով վերապրելը Ինտրայի «հին, մանկության գաղափարներից» կամ երազներից մեկն էր: Ու թեև դիպվածը՝ Ադանայում իր ուսուցչությունն էր հնարավորություն ընձեռել իրագործելու նման երազանքը, բայցևայնպես, Տիրան Չրաքյանը համոզված էր, որ «այդ հաջողությունը կուգար միշտ Կիլիկյան լեռներուն գաղափարեն, որ դիպվածն իրեն ծառայեցուց» (էջ 257): Եվ ինչպես «Ներաշխարհ»-ում, այստեղ ևս ընթանում է կառքը Ադանայից Տարսոն՝ «անհուն լեռնագոտվոյն» ստորոտներն ի վեր, մինչև այն բարձրակետը, ուր, ասես ոտքերի տակ, «կապույտ դաշտը խաղաղասփյուռ կիտարձակվեր» (էջ 259): Իրական գեղեցկության կենդանի տպավորությունները, միախառնված նախնի երազի եթերայնությանը, խտանում են հիացական բացականչության մեջ՝ «Աշխարհի ամենեն նախանձելի վայրերեն մին կդիտեինք. Դաշտային Կիլիկիան...» (էջ 260): Նախանձելի ու հենց այդ պատճառով էլ բազմաթիվ նվաճողներից ասպատակված, ձեռքից ձեռք անցած ու տառապած:

Մտորելով Հայոց պատմության կիլիկյան շրջանի առեղծվածների շուրջ՝ Չրաքյանն ի խորոց սրտի ափսոսանք էր հայտնում, որ Ռուբենի թոռնորդի «Պարոն Լևոն»-ի հանդգնությունը, ըմբոստությունն ու ռազմի ուժը, որով իր տիրապետությանն էր ենթարկել Տարսոնը, Ադանան ու Մամեստիան, «չկրցավ միշտ շարունակվիլ» (էջ 260): Կարծում ենք, սակայն, բուն իրողության արձանագրումից ավելի, այստեղ կարևոր է դրա պատճառի չրաքյանական մեկնաբանությունը: Լևոնի հանդգնությունը, գրում է նա, չշարու-

8 Տե՛ս Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1921, էջ 30:

9 Տպագրվել է «Շիրակ», 1909, N N 4,5,6, 8: Հետագայում հրատարակվել է նաև **Տ.Չրաքյան**, «Երկեր», էջ 256-282:

նակվեց «թերևս **չափազանց քաղաքակրթված ու նրբացած** Լուսինյաններեն» (էջ 260) (ընդգծումը մերն է–Պ.Գ.), որոնք, ըստ էության, կիսեցին մահմեդական հեղեղից քշվող Բյուզանդական կայսրերի ճակատագիրը: Պատկերը կրկնվում է, երբ «Ալեյան դաշտաց ու անոնց ոստաններուն» առաջին գրավումից 40 տարի հետո, Լևոնի որդի Թորոսի «արի բազուկով» ու նրա եղբորորդի «գեղեցիկն Ռուբենի» ձեռքով կրկին ետ խլվեցին հայրենի հողերն ու քաղաքները, բայց այս վերջինը, ավաղ, «շուտ լքեց բիրտ երախակալն՝ Անտիոքի գեղուիյաց հրապույրները գգվելու համար» (էջ 261): Այս ամենը, Տիրան Չրաքյանի հետ միասին, ընթերցողին բերում է այն կարևոր հետևության, որ միայն սեփական գործությամբ, զգոնությամբ, կամքի ու բարոյականության ուժով, երկրի ու ժողովրդի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ կարելի է պահել հայրենի հողը, պաշտպանել ազգը բարբարոս նվաճողներից:

Ըստ Տ. Չրաքյանի՝ «Տորոսի ամուրներուն մեջ» առաջինը Կիլիկյան ազգային իշխանությունը հիմնած Ռուբենը լավ գիտեր այդ գեղեցիկ ու բերրի տարածությունները, քանզի Բյուզանդական կայսրության Տավրոսի ու նրա շրջակա տարածքների կառավարիչ, հայազգի իշխան Ապլղարիայի հրավերով այդ քաղաքն այցելած գահագուրկ Գագիկ Բ–ի շքախմբում էր: Այցը տեղի էր ունեցել «սովի տարի մը, 1079–ին», երբ Սմբատ պատմիչի վկայությամբ, շրջակա երկրներում ամենուրեք մարդիկ մեռնում էին անթությունից, կեր դառնում գազաններին ու վայրի թռչուններին: Պատճառը սելջուկյան արշավանքներն էին՝ «վասն տարածելո Թուրքին», «քանզի հավերմանն նոցա փախյավ ամենայն վաստակ երկրագործաց» (էջ 261):

Ուշադրություն դարձնենք՝ պատմական այս փաստերը շեշտադրվում էին 1909 թվականին, երբ Ադանայում այդ նույն թուրքերի հետևորդները հին ձեռագրով նոր ջարդեր էին կազմակերպել Կիլիկիայում: Գրվածքի այս էջերն ամբողջովին լցված են Ռուբենի նկատմամբ գրողի մեծագույն սիրով ու ակնածանքով. «Ո՛հ, սիրելի թագավորս. ամբողջ հոգի ու ամբողջ կիրք. ամբողջ արիություն և արդարություն...» (էջ 262): Բարեմասնություններ, որ գրողի համոզմամբ, պետք է զարդարեին ամեն մի հայրենանվեր իշխանի ու թագավորի նկարագիրը:

Այնուհետև, ետ տանելով պատմության վարագույրը և ընթանալով դեպի դարերի խորքը, գրողը մեկ առ մեկ հիշատակում էր Կիլիկիայում տեղի ունեցած բոլոր նշանավոր իրադարձություններն ու դրանց կարևոր դերակատարներին: Եվ այդ ամենի գլխավոր նպատակը կիլիկյան հողի վրա հայոց հնագույն հետքերի բացահայտումն էր: Հիանալով Բյուզանդիայի քաջարի կայսր Նիկիփոր Փոկասի՝ արարների դեմ մղած արշավանքով, Չրաքյանն անկեղծորեն երագում էր. «Որքան կուզեի որ Պատմությունն ըսեր, թե այն մեծ մարդն ալ հայ էր» (էջ 262): Եվ նույնիսկ փորձում էր պատմական փաստերով ապացուցել նման վարկածի հնարավորությունը. «... եթե Նիկիփորի հոր Bardas անունը ոչ այլ ինչ է, այլ գոր օրինակ Վարդան» (էջ 263): Ընդ որում, սա գրեթե միակ դեպքն է, երբ իր սաստիկ տենչացված երազանքը գրողը հնարավոր էր համարում իրականացած տեսնել ոչ թե ապագայում, այլ անցյալում: Եթե դա ճշմարիտ է, գրում է նա, «...ին իդձս – տղայական գուցե, բայց անդիմադրելի – կիրականանա՞մ հեռավոր անցելույն

ԳՐԱՎԱՆԱԿԻՏՈՒՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽԱՅԻ-ՄԱԿՐԱՆԵՐ, 2013

ՎԻՄ ԽԱՄԱԿԱՅԻԿԱՅԻՆ ԽԱՆՈՒՆ

մեջ» (էջ 263): Շրջելով պատմության էջերը՝ գրողը, ի վերջո, գալիս էր այն հետևության, թե Խաղդիք, Փոյուզացիների և Ուրարդյան ժողովուրդների հետ մեկտեղ, այսինքն՝ այդ «Տորոսյան ժողովուրդը մին է մեր սկզբնական նախահայրերեն», ուրեմն և «մեզ՝ Հայոց կրնանք խորապես հեռավոր ու մեծ ազնվագարնություն մը ընծայել համարձակորեն» (էջ 266):

Տ.Չրաքյանի ազգային-հայրենասիրական զգացմունքները հիշյալ ուղեգրության մեջ տպավորիչ ու պատկերավոր դրսևորում են ստանում նաև գրվածքի միանգամայն ռեալիստական կերպարային լուծումներում: Մասնավորապես, կառապան Ալու՝ «պոստված ու մուր-մուր հոնքերով, մութ, խոշոր ու հառուն աչքերով» (էջ 268), «խելքե ու հեռատեսութենե, ինչպես հեռաքրքրութենե ու երևակայութենե գուրկ» (էջ 269) այդ «խե՛ղճ ոչինչ մարդու» (էջ 268) կերպարը ընթերցողի ընկալումներում հակադրության մեջ է մտնում նախընթաց էջերում նկարագրված Հայոց մեծերի ազնվագար, վեհորեն սքանչելի կերպարների հետ: Բնական է, որ այն կերտվել է ակն-հայտորեն երգիծական, մինչև անգամ զավեշտական գույներով: Ալին նստել էր ծալապատիկ, «գոտեվոր փորը կարկառուն, հոն խլրտող կյանքին նայելով հաճոյալի անտարբերությամբը հանգստավետ անկարոտ մարդու, վասնզի քանի մը ոսկի ապահոված՝ հիմա ակ փորը կշտացուցեր էր» (էջ 269): Ալու համար կյանքի մի բանաձև գոյություն ուներ, ըստ որի՝ «օրը՝ այսօր է, ժամն ալ այս ժամը» (էջ 270): Նա մարդու այն տեսակն է, որ որևէ երկրայություն չունի, այլ միայն լիակատար գոհունակություն, «կշտացած ու քիթը բերանը լզվտող կենդանիի մը անզբաղությամբ կերակուրին փշուրներն ու հետքերը ժողվելով, կարելի բոլոր համը կծծեր կերածեն, անասունի մը պես աղքատ ու խորտիկներ վայելած փաշայի մը պես նախանձելի» (էջ 269-270): Մեծ հակադրությունը ծնվում է կարծես ակամա. մինչ այս չնչին արարածը, միանգամայն անգիտակ շրջապատի վեհ ու հզոր տեսիլներին, մշտապես անցնում է հրաշագեղ այդ տեղերով, բանաստեղծին ու նրա ազնվահոգի ուղեկիցներին «ժամ մը, իրիկվան պահ մը միայն տրվեր էր» ապրելու մեծագործություններով հարուստ այդ անհուն ու խրոխտագեղ արարչության, մարդկային պատմության դարերից, հայ ցեղի՝ «այս թատերց մեջ բարախած կենաց տևողության անհատնում անհաշվելի տիվերեն» (էջ 274): Ուստի Տիրան Չրաքյանը համոզված է, որ մեծ հոգու համար դրախտային այդ մի ժամը, մի պահը ավելին են, քան չնչին մարդուկների օգտապաշտ գոյության տարիներն ու տասնամյակները:

«Տորոսէն անցք»-ը ավարտվում է պատմական Մոպսոսի աղբյուրի մոտ գիշերային հանգրվանի տեսարանով: Կարևոր է նկատել, որ ավարտի տեղն ու ժամանակը պատահական չեն ընտրված: Անմիջական իրականության՝ Տավրոսյան լեռների միջով ուղևորության պատմությունը Տիրան Չրաքյանի համար խորք ու լիարժեք իմաստ չէր ունենա, եթե, ի վերջո, չհանգեր տիեզերական, համամարդկային մասշտաբներ ընդգրկող ընդհանրացման: Քանզի գիշերը բարձրախոհելու և համաստվածյան ապրումներին տրվելու լավագույն ժամանակն է, իսկ Մոպսոսի աղբյուրը՝ «մոգական տեղ», որը հաստատել էր «վաղնջական օրերու քուրմ մը, մեծագոր գուշակ՝ աստվածորդին Մոպսոս» (էջ 280): Ու եթե ուշադրություն դարձնենք այն իրողությանը, որ հենց այս վայրում է գրողը **գգում** այն, ինչը սովո-

րաբար տեսնվում կամ լսվում է, ու նաև իրար կողքի դնենք պատմական դեմքերի հետ կապված այն «խորհրդավոր» դրվագները, որ բերվում են գրվածքում՝ ի հաստատումն տեղի գերբնական զորության, պարզ կդառնա, որ գրողի միտքը պարզապես փոխում է իր հայացքի ուղղությունը՝ մարդկային պատմության հորիզոնական դաշտից տեղափոխվելով դեպի վեր՝ ուղղաձիգ այն տարածքը, ուր խորքն ու բարձրությունը, վերն ու վարը պարզապես կորչում են Անսահմանության համասեռ էության մեջ: Պատահական չէ, որ այս նոր չափումներում այլևս «Ավան կամ Դոյակ չկար», ավելին՝ չկար նաև «քրիստոնեական ժամանակի ոչ մեկ հետք», այլ միայն «մեծագործ մեծվայելուչ առանձնության մը խորը, Բնության հավերժական հեթանոսության մեջ՝ միայնակ աղբյուրը, մշտախոխոջ, անլռելի, անմեռ» (էջ 279-280): Սրանից այլևս հասկանալի կդառնա Չրաքյանի ներէության բավիղներից հառնող հուզումն ու խոհը, թե՛ «Արդյոք աստվածոց դարերեն դրվա՞մք մը կապրե՞ինք» (էջ 279):

Եվ հենց աստվածային այս վայրում էր, որ «տաճիկները երկիրն ավերեցին», սակայն ընդամենը մի քանի օր անց թագավորահայր Կոստանդինը, Հեթում Առաջինն ու սպարապետ Մմբատ Գունդստարը «իրենց հեծյալներով հետապնդեցին զանոնք լեռներուն մեջ, հասան Մայծառ, զարկին, հաղթահարեցին ու վանեցին Տաճիկները մինչև Պոտանդե, այսինքն Կուկլակ կիրճեն դուրս...» (էջ 281):

Ինտրայի ազգային իդեալների արտացոլումն է նաև «Ռ.Հ. Պերպլերեան. գրագէտ»¹⁰ խորագրով ուշագրավ վերլուծականը, որը Ուսուցչապետի ծննդյան 60-ամյակին նվիրված հանդեսում Տիրան Չրաքյանի կարդացած բանախոսությունն է: Այստեղ Ռ. Պերպլերյանի գրական ու մարդկային կերպարի ճշմարտացի գնահատականը նա փորձում է տալ հայ մշակույթի պատմական զարգացման խորապատկերի վրա: Ըստ այդմ՝ Ինտրան բարձր է գնահատում 19-րդ դարի կեսերից սկսված ազգային կյանքի վերակենդանացման շարժումը՝ «հանրային կենաց գիշերահավասար, որ կնշանագծե մութին նվազումն ու աճումը լուսավորության» (էջ 376), և որի մեծագույն արդյունքներից մեկը Ազգային սահմանադրության ստեղծումն էր: Կարևորելով անհատի դերը պատմական զարգացումների շղթայում՝ Ինտրան ընդգծում էր, թե այդ շարժման «եթե ոչ բոլորովին ստեղծիչներն, այլ վարիչներն» էին գլխավորաբար «գիտնական մը՝ Ռուսիյան, արվեստագետ մը՝ Նիկողոս Պայան, և գրագետ մը՝ Գրիգոր Օտյան» (էջ 377): Ուստի հավատարիմ մնալով օրինակելի հասարակության իր իդեալին և զարգացնելով «Ներաշխարհ»-ում արտահայտած տեսակետները, նման հասարակության կազմակերպման գործում Տիրան Չրաքյանն առաջնային նշանակություն էր տալիս **գիտական ճշգրտության, ստեղծագործական երևակայության ու մարդկային բարոյականության** հիմնարար սկզբունքներին:

Ինտրայի պատկերավոր ձևակերպմամբ՝ «...իր այթռեն զրկելով քմաց ու կիրքերու տիրապետությունը՝ պարտուց և իրավանց գաղափարը կբարձրացնե հաթռռ իշխանության. ազգը վարող այլևայլ ընդդիմակ ու շփոթ և

10 Տպագրվել է «Ոստան», 1911, N 4: Հետագայում հրատարակվել է նաև **Տ.Չրաքյան**, «Երկեր», էջ 376-392:

ԳՐԱՎԱՆԱԿԻՏՈՒՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳՐԱԿԻՏՈՒՅՈՒՆ, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

անհաստատ ձգտումներուն տեղ՝ տիրել կուտա կարգին. և քշող ու սպառնացող գավազանին տեղ կդնէ կառավարող մականը» (էջ 376-377): Դժվար չէ նկատել, որ այդպիսով Ինտրան դեռևս 20-րդ դարի սկզբներին պաշտպանում էր **իրավական պետության** և **քաղաքացիական հասարակության**՝ քաղաքակիրթ աշխարհում հռչակված սկզբունքները: Ընդգծելով իրավունքի առաջնությունը արդարացի հասարակության կազմակերպման մեջ՝ նա դավանում էր նաև բազմակարծության, ազատամտության և փոխադարձ հանդուրժողականության, այսինքն՝ **ժողովրդավարության** արդիական ընկալումը: Մանավանդ՝ երբ ճշգրտում էր, թե սահմանադրությամբ «քաղաքակրթական, այսինքն **ինքնարգո և այլահարգ** ընթացք մը կպարտադրվի՝ կամ ներեցեք ըսել՝ **կ'իրավընծայվի** հայ քաղաքացվուն» (էջ 377) (ընդգծումները մերն են - Պ.Գ.) :

Սակայն «քաղաքացիական այս դաստիարակությունը», Ինտրայի համոզմամբ, դեռևս բավարար չէր: Դրան պետք է հաջորդեին **ազգային կրթությունը, մտավոր կրթությունը և բարոյական կրթությունը**, որոնք ապահովում են «առաջին քաղաքացիական դաստիարակության» փթթումն ու զարգացումը՝ «անով կարելի և անով տևելի» (էջ 377):

Ժամանակի պահանջը առաջ էր բերում այն իրագործելու ունակ անհատներին՝ նոր առաջնորդներին: 19-րդ դարի վերջին քառորդին «գրեթե միահաղույն» հրապարակ են գալիս «կարկառուն ու տիրական» երեք երիտասարդ ու լուսացայտ դեմքեր՝ Մինաս Չերազը, Եղիա Տեմիրձիպաշյանը և Ռեթեոս Պերպերյանը: Երջանիկ պատահականությամբ երեքն էլ ծնված Խասգյուղում, երեքն էլ «գրեթե նույն ուսումներով մշակված, ու եվրոպական ու հայկական մատենագրությամբ սնած, երեքն ալ գաղափարի ու խոսքի մարդ. երեքն ալ ուսուցիչ, հրապարակագիր, ատենախոս», նաև՝ ճարտասան: Ինտրայի համոզմամբ՝ դրանք հենց այն հատկանիշներն էին, որ հնարավորություն են տալիս նրանց դասելու «իրենց ժամանակին և ամեն ժամանակի հայ կյանքին բարձրագույն կայքերուն» (էջ 377): Ինտրան շեշտում էր նաև միմյանց հետ նրանց սերտ գործակցության, միասնական ջանքերի հանգամանքը, որն ուղղված էր «հայությունն ազնվացնելու» ընդհանուր և գլխավոր նպատակին: Ընդ որում՝ Մինաս Չերազն «առավելապես նվիրված է մասնավոր կրթության մը, ազգայինին», Եղիա Տեմիրձիպաշյանը՝ «նվազ մասնավոր և ավելի ընդհանուր կրթության մը, մտավորին», իսկ Ռեթեոս Պերպերյանը՝ «ընդհանուր կրթության մը, բարոյականին» (էջ 378): Այսպիսով՝ Մ.Չերազի հետաքրքրությունները վերաբերում էին ազգային կյանքին, ընդհանուր և ժամանակակից պատմությանը: Չերազը, ըստ Ինտրայի, «գավակն է 1860-ի», և «հայկական խնդրույն» (էջ 381): Նրա գլխավոր նպատակը հայ ժողովրդի քաղաքական վիճակի բարելավումն է, «Հայությունը միաբան ու ինքնավար տեսնելու երազը»: Նման հակումներ ունեցող գործչին, բնականաբար, անհրաժեշտ են «միակողմանի և քիչ կամ բնավ փիլիսոփայական հայեցողություն», խառնվածքի ու մտքի անկախություն, ըմբոստ ոգի, պայքարելու և մաքառելու կորով...: Հատկանիշներ, որ Ինտրայի համոզմամբ, պետք է ունենա «ամեն ազգային անհատ, աշխարհի ազգերուն մեջ» (էջ 378):

«Ազգասեր հրապարակագիր և ճառախոս» Եղիա Տեմիրձիպաշյանի

նյութը «ազգային ուրիշ խնդիրներ են», որոնք հանգում են ազգային լուսավորության, բայց նրա գրականության սահմաններն ավելի հեռուն էլ են տարածվում՝ ընդգրկելով հայ ամբողջ մտավորական կյանքը՝ մտածողության բոլոր ձևերը, «արվեստն ու գրականությունը, գիտությունն ու իմաստասիրությունը» (էջ 379):

Ռեթեոս Պերպերյանի Եսը, ընդհակառակը, «Մի է և նույն՝ իր բանականության հետ», թերևս, բանականության մարմնավորումն իսկ է: Հազվագյուտ այդ առաքինությունը, որը, ըստ Ինտրայի, մեկ բառով կոչվում է ողջստություն, Պերպերյանի «մտքին ու գրականության կանոնն է» (էջ 382) հենց: Չանտեսելով ազգային կյանքի խնդիրները (դաստիարակություն, լեզու, եկեղեցի), որով ներկայանում է որպես «ազգային կյանքով շահագրգռվող և զայն ուղղելու ձգտող ու կարող իմացականություն» (էջ 381), նա առավելապես հետամուտ է ընդհանուր, համամարդկային հիմնահարցերի պարզաբանմանը, ուստիև նրա կյանքի ու գործի ամբողջության նպատակն ու արժեքը ամենժամանակյա է:

Ինտրայի ազգային-հայրենասիրական նկարագիրը ցայտունորեն դրսևորվել է նաև նրա հարուստ նամակագրական ժառանգության մեջ¹¹: 1901 թ. աշնանը նախաձեռնելով Պերպերյանի վարժարանի քսանհինգամյա հոբելյանի առթիվ լուրջ հողվածների տպագրության գործը՝ Ինտրան իր մտերիմ ընկերոջը՝ արևմտահայ ճանաչված գրող Միքայել Կյուրճյանին պարզաբանում էր, թե դրանք պետք է հրապարակվեն «ոչ թե Մանգումէին մեջ որուն ոչ թուրքերէն անունը, ոչ արժէքը կը պատշաճին այդ օրուան, – հապա Բիւզանդիոնին, «**հայաթերթին**» մէջ, որուն խմբագիրները արդէն կը յարգեն մեծապես Պերպերյանը» (ընդգծումները մերն են – Պ.Դ.)¹²: Աչքի է զարնում նաև այն հանգամանքը, որ իր էությանը կատարելապես այլա՝ սեր ու մարդասեր Ինտրան որոշակի վերաբերմունք էր դրսևորում մարդու թուրք տեսակի և թրքականության նկատմամբ: 1914 թ. իր բարեկամ Աշոտ Փափազյանին Տիրանը ցավով գրում էր, թե այնքան անհավանական էր, որ Փափազյանների հարևան Լևոն էֆենտիենց տանը խրախճանք էր կատարվում, «երբ դուն Չորրուի մէջ նժդեհ զինուոր մըն ես, **նեղութիւններուն ամենէն թուրք տեսակին** կալանաւոր...» (ընդգծումը մերն է – Պ.Դ.)¹³:

Նամակագրությունը վկայում է, որ Ինտրան մշտապես բարեկամական ու գործնական սերտ կապեր էր պահպանում ազգային կյանքի խնդիրների լուծմանը նախանձախնդիր այնպիսի նշանավոր դեմքերի հետ, ինչպիսիք են Վահան Թեքեյանը, Երվանդ Օտյանը, Արշակ Չոպանյանը, Միքայել Կյուրճյանը և ուրիշներ:

Հատկանշական է, որ դեռ 1904-ին Թեքեյանի և Կյուրճյանի առաջարկով Տ.Չրաքյանը ստանձնել էր Ալեքսանդրիայում վերջիններիս կողմից հիմնված «Շիրակ» հանդեսի գեղարվեստական ձևավորումը: Առաջին համարը լույս էր տեսնելու 1905 թ. հունվարի մեկին, և Տիրանը շտապում էր շնորհավորել ու բարեմաղթանքներ հղել նրանց. «Կրնամ ուրեմն պաշտօնական շնորհաւորութիւն մը ընել քեզի, – գրում էր նա, – երկուքնուդ ալ, վասն զի

11 Տե՛ս ԳԱԹ Մ.Կյուրճյանի, Տ.Չրաքյանի, Ա.Չոպանյանի և այլ ֆոնդերում:

12 ԳԱԹ, Մ.Կյուրճյանի ֆոնդ, II բաժին, 243, 9 սեպտ. 1901 թ.:

13 ԳԱԹ, Տ.Չրաքյանի ֆոնդ, 27 օգոստ./9 սեպտ. 1914 թ.:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽԱՅԻ-ՄԵՍԿՈՒՄԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

շատ սերտ գործակցություն մը կ'երևիք կոր ունենալ,- և մաղթել որ իր «տևականության երաշխատրությունը» հետզհետեւ աւելի հաստատուն ըլլայ. և յաջողիք պանծալի հրատարակություն մը ընել զայն, թրքահայ լեզուով և թրքահայ ուժերով արտադրուած հազուագիտ ամսաթերթ մը, որ իր ընդհանրականութեամբը հայութեան պատիւ բերէ, և հայկականութեամբն ալ ընդհանրութեան»¹⁴:

1909-ին Արշակ Չոպանյանը Փարիզում հրատարակվող իր համրավավոր «Անահիտ» հանդեսին աշխատակցելու առաջարկ էր արել Ինտրային. «**Անահիտ**ին մէջ աշխատակցութեանս կը փափաքիք,-գրում էր Ինտրան նույն թվականի իր պատասխանն նամակում,- պիտի ուզէի վայելել այդ պատիւը, եթէ բաւական ժամանակ կարենայի գտնել, զբաղումներով լի բայց այնուհանդերձ քիչ գործօն կեանքիս մէջ»¹⁵: Այս նամակը կարևոր մանրամասներ է պարունակում Ա.Չոպանյանի ստեղծագործության նկատմամբ Ինտրայի ունեցած վերաբերմունքի և գնահատության վերաբերյալ: Տարիներ անց՝ 1912 թվականին գրված մեկ այլ նամակում¹⁶ դրանք ոչ միայն հաստատվում, այլև հարստանում են նոր որակումներով, անթաքույց մատնելով նաև Ինտրայի ազգասիրական զգացումներն ու համոզմունքները: Ա.Չոպանյանն արդեն արմատավորված ավանդույթի ուժով նրան էր ուղարկել իր հերթական երկը՝ «Հայ էջեր»-ը: Ուշացրած լինելով իր արձագանքը՝ վերջինս ջանում է ամեն կերպ «քավել իր մեղքը», ընդգծելով, թե՛ «ոչ միայն իբրև բարեկամ, ոչ միայն իբրև Ձեր տաղանդին ու գործունեությանը հիացող պարտ էի փութալ Ձեզի շնորհակալ ըլլալու, այլ նաև **իբրև Հայ**» (ընդգծումը մերն է - Պ.Դ): «Ձեր նոր այդ գործով,-շարունակում է նա,- անգամ մըն ալ կը յայտնէք թէ լաւագոյններէն էք անոնց որ սրտագին նուիրած են իրենց կարողութիւնն՝ ազգային գիտակցութեանն ու արժանապատուութեան զօրացմանն ու պայծառացումին»: Ապա թվարկելով Ա.Չոպանյանի մինչ այդ հրատարակած հայերեն ու ֆրանսերեն ժողովածուները՝ Ինտրան համոզված կարծիք է հայտնում, որ «բոլոր ատոնցմով Դուք իսկ եղած ըլլաք մեր ինքնաձանաչութիւնն ու ինքնայարգութիւնն աճեցնող ազնուացնող Հայերուն մեծագոյնը»:

Ինտրայի մտածողության ազգային էությունը լավագույնս դիտարկելի է նաև մայրենի լեզվի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի, լեզվամտածողության ու լեզվաշինության համատեքստում: 19-րդ դարակեսից աշխուժանում է գրապայքարը ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ մտավոր շրջանակներում: Բայց խնդիրը միայն լեզուն չէր, այլ նաև մտածողությունը. կյանքի արագացող ընթացքը պարտադրում էր նորանոր ընկալումներ, հետևապես և դրանց արտահայտություն՝ նոր բառեր ու ձևեր: Ժամանակի այս պահանջին լավագույնս արձագանքողներից մեկն էր Տիրան Չրաքյանը: Լեզվապայքարի մեջ վստահորեն կանգնելով աշխարհաբարի կողքին՝ Ինտրան, միաժամանակ, չէր դադարում պաշտելի, «երկրպագելի» համարել մաշտոցյան գրաբարը: Նաև այն բանի համար, որ համոզված էր, թե որոշակի կապ գոյություն ունի գրաբարի, ինչպես որևէ

14 ԳԱԹ, Մ.Կյուրճյանի ֆոնդ, II բաժին, 246, 7/20 դեկտ. 1904 թ.:

15 ԳԱԹ, Ա.Չոպանյանի ֆոնդ, I բաժին, 5858, 25/8 հոկտ. 1909 թ.:

16 Տեն նույն տեղում, I բաժին, 5857, 12/25 Յունիս, 1912 թ.:

Ժողովրդի լեզվի ու նրա հայրենիքի, մայրենի բնության միջև: Այս կապակցությամբ Միքայել Կյուրճյանին ուղղված իր նամակում¹⁷ Ինտրան գրում էր. «Կ'ենթադրեմ, թե լեզուն խօսող, ծնող ժողովուրդին երկրային միջավայրին սերը գլխ. պատճառներէն մէկն է լեզուին՝ բնութեան այդ միջավայրին, բնութեան շեշտը, տոնը, դրոշմը կրելուն: Ենթադրելու բան չիկայ. այսպէս է»: Մանավանդ՝ գրաբարը հասկանալու համար, ըստ նրա, «պէտք է երթալ ան երկիրը ուր Արարատը կը տիրէ, ու Մեծ-Հայոց լեռները. և Տօրոսը կը բարձրանան, և որոնց նայելու երանութիւնը չեն գիտեր երբ պիտի տրուի իմ... գրաբարապաշտի (...) հոգիիս»: Ավելին, հիշյալ նամակում խոսելով «Ինտրային հայերէնին» մասին՝ փակագծում նշում էր, թե այն «յաճախ գրաբարի ոգին ունի»: Բայց քանի որ այլևս պատմական իրողություն էր գրաբարի անհասկանալիությունը ժողովրդի մեծ մասի համար, ուրեմն և Ժամանակակից գրական սերնդի հիմնական խնդիրն էր «բարձրացնել աշխարհաբարը գրաբարի ճոխութեան», որն ինքնին արդեն կարող էր նպաստել մտքի ճոխությանն ու մտածելու բազմաձևությանը:

Արշակ Չոպանյանը, գնահատելով Ինտրայի «ոստանիկ բարձր մշակույթի հոյակապ տաղանդը», նրան բնորոշել է իբրև «սքանչելի գրագէտ մը»¹⁸: Այս համատեքստում հատկանշական է նաև Ա.Չոպանյանի տեսակետը գրողների ստեղծագործության ազգային էության վերաբերյալ, որը նա արտահայտել է Բաֆֆու ծննդյան հարյուրամյակի առթիվ իր հրապարակման մեջ. «Կան գրագետներ կամ բանաստեղծներ, որ իրենց երկերուն մեջ չեն զբաղիր մասնավորապէս իրենց ազգի ձակատագրով, բայց որոնցմով կը պարծի իրենց ազգը, վասնզի անոնց անձնադրոշմ – կամ ցեղադրոշմ – մեծ տաղանդը ինքնատիպ գեղեցկությանց ստեղծիչ մը, մարդկային, ինչպէս և տիեզերական կյանքի՝ խորհուրդներուն, մարդկային ընկերության ցավերուն, տենչերուն, պայքարներուն վարպետ արտահայտիչ մը կամ մեկնիչ մը հանդիսացած է»¹⁹: Եվ չափազանց խոսուն է այն փաստը, որ այս շարքին պատկանող ֆրանսիացի դասականների՝ Լաֆոնտենի, Ռասինի, Բոդլերի, Վեռլենի և ուրիշների կողքին Ա.Չոպանյանը նշում է **Նարեկացու, Սայաթ-Նովայի, Մեծարենցի**, նաև՝ **Ինտրայի** անունները...

17 Տե՛ս ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, II բաժին, 241, 16 հոկտ. 1900 թ.:

18 Ա.Չոպանյան, Երկեր, Եր., «Մով. գրող», 1988, էջ 752:

19 Նույն տեղում, էջ 677:

Summary

THE ETHNIC BIAS IN DIRAN CHRAKIAN'S (INTRA) FIGURATIVE THINKING SYSTEM

Petros H. Demirchyan

Diran Chrakian (Intra) is one of the most individualistic and, at the same time, most mysterious figures in Armenian literature whose life and creative activities from the outset were exposed to highly controversial, even extreme estimates.

His exceptional talent and literary activity, especially “Nerashkharh” (inner world) analytical-philosophical essay and “Nojastan” (cypress-groove) collection of poems, were appreciated by many great literary figures such as Vahan Tekeyan, Arshak Chopanyan and others, but no fewer were his opponents and critics.

Even some of his most serious critics used to blame him mainly for keeping away from all-national concerns and for advocating abstract and false values.

Yet, not only does full knowledge of Intra's multidimensional literary works, published in both Homeland and the Diaspora – scattered through the media of that time – refute this view, but it also helps reveal the ethnic foundations of his creative thinking, a few manifestations of which are highlighted in this article, in addition to “Nerashkharh” (inner world) and, in particular, “Torosen Antsk” (passage of Taurus) diary and “R. H. Perperyan: the literate” in-depth analysis, as well as his views on ethnic language-building issues and other writings.